

ԾՐԱԳԻՐ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Անտառային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ներքոնշյալ գործառույթները պատշաճ և ժամանակին իրականացնելու համար նպատակահարմար է ներգրավել փորձագետ (այսուհետ՝ Փորձագետ).

1) մշակում է անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրեր՝ համագործակցելով նաև միջազգային համապատասխան կառույցների հետ.

2) մասնակցում է անտառային բնագավառի ինստիտուցիոնալ բարեփոխումների ու ֆինանսական ռազմավարության մշակմանը, հատկացված ֆինանսական միջոցների կառավարմանը, ինչպես նաև դրանից բխող ներդրումային ծրագրերի նախապատրաստմանը և իրականացմանը, պայմանագրերի կնքմանը

3) մշակում և կազմակերպում է անտառային հողերում հրդեհային անվտանգության, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերը.

4) կազմակերպում է պետական անտառային տնտեսությունների վարումը.

5) կազմակերպում է անտառների վերականգնման և անտառապատման, ինչպես նաև սելեկցիոն-սերմնային տնտեսության վարման, ագրոանտառաբուծության, տնկարանային տնտեսության ընդլայնման, անտառամելիորատիվ միջոցառումներ.

6) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա տրամադրում է համաձայնություն անտառավերականգնման, անտառապատման, անտառային ճանապարհների կառուցման և վերանորոգման նախագծերի, անտառային ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի վերաբերյալ .

7) իրականացնում է պետական անտառների տիրապետումը և օգտագործումը.

8) ներկայացնում է առաջարկություններ անտառային հողերի և անտառների՝ ըստ նպատակային նշանակության դասակարգելու վերաբերյալ.

9) կազմակերպում է անտառների արտադրողականության բարձրացման, անտառավերականգնման, անտառապատման և խնամքին ուղղված պետական նպատակային ծրագրերի իրականացումը.

10) կազմակերպում է անտառային օրենսդրության խախտումների կանխարգելման և հայտնաբերման աշխատանքները.

11) տրամադրում է համաձայնություն անտառներում և անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման համար.

12) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով անտառների կամ անտառային հողերի նկատմամբ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի ձեռքբերման հայտերի ընդունումը և մրցույթների կազմակերպումը, համաձայնության տրամադրումը.

13) հրդեհավտանգ ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում, անտառի առանձին հատվածներում ապահովում է քաղաքացիների և տրանսպորտային միջոցների օրենքով նախատեսված դեպքերում մուտքի արգելումը կամ սահմանափակումը, ինչպես նաև այդ հատվածներում որոշակի աշխատանքների իրականացումը:

Փորձագետը իրականացնում է.

- պետական անտառային պաշարների արդյունավետ օգտագործման և այլ ծրագրերի մշակում՝

համագործակցելով նաև միջազգային համապատասխան կառույցների հետ,

- անտառային բնագավառի ինստիտուցիոնալ բարեփոխումների ու ֆինանսական ռազմավարության մշակման հատկացված ֆինանսական միջոցների կառավարման, ինչպես նաև դրանից բխող ներդրումային ծրագրերի աշխատանքներ,
- փաստացի ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություններ տրամադրելու նպատակով մասնագիտական հանձնաժողովների ստեղծման և եզրակացությունների համաձայն տարեկան իրականացվելիք հատումների ծավալների հաստատման կազմակերպման աշխատանքներ,

- պետական անտառային հողերում վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերի մշակում և կազմակերպում,
- անտառային հողերի և անտառների՝ ըստ նպատակային նշանակության դասակարգելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
- պետական անտառների վերականգնման և անտառապատման, ինչպես նաև սելեկցիոն-սերմնային տնտեսության վարման, ագրոանտառաբուծության, տնկարանային տնտեսության ընդլայնման, անտառամելիորատիվ միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական անտառների կամ անտառային հողերի նկատմամբ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի ձեռքբերման համաձայնության տրամադրման աշխատանքներ,
- անտառներում և անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների համար համաձայնության տրամադրման աշխատանքներ,
- անտառային ոլորտին վերաբերող այլ փաստաթղթերի վերաբերյալ համաձայնության տրամադրման աշխատանքներ,
- պետական անտառային տնտեսությունների վարման կազմակերպում,
- պետական անտառների արտադրողականության բարձրացման, անտառավերականգնման, անտառապատման և դրանց խնամքին ուղղված պետական նպատակային ծրագրերի իրականացման կազմակերպում,
- անտառների պահպանության բնագավառում տեղեկատվության հավաքագրման և ամփոփման աշխատանքներ,
- աջակցություն համայնքային անտառների ստեղծմանն ու զարգացմանը:

Փորձագետը սույն ծրագրով կատարման ենթակա աշխատանքներն իրականացնում է վեց ամիս ժամկետով:

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում:

Փորձագետը սույն ծրագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ երեք ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները:

Սույն ծրագրի իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- բարձրագույն կրթություն,
- հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ անտառային տնտեսության կամ բնապահպանության կամ շրջակա միջավայրի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:
- համակարգչով աշխատելու ունակություն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն,
- Հայաստանի Հանրապետության Անտառային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, ինչպես նաև անտառային ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի իմացություն: